



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

323

U-82

1922

15 JAN 2010

Հ. Ս. Խ. Հ.

Պրիւատները բոլոր երկրներէ, միացեալ.

Ա. ՄԵԱՄՆԻԿԵԱՆ (ԱԼ. ՄԱՐՏՈՒՆԻ)

ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ
ՈՒ
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Զեկուցում Հայաստանի համալսարանի
անդրանիկ համագումարի առաջին
նիստում, 1922 թ. յունուարի 30-ին)



ԳՍՏԱԿԱՆ ՀՐԱՏՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — № 7.

Երևան — 1922.

323
Մ-82

03.07.20

76007

26 SEP 2006

87-

573
-82



217-69

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՍԻՄԻԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՊԱՐԱՆ — ԵՐԵՎԱՆ

ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Բուռն եւ երկարատեւ ծափեր, սվաղիաներ, բացա-
կանչուրիւններ՝ «Կեցցէ հայկական Լենինը»):

Ընկերներ, ես այստեղ պիտի տամ մեր կառա-
վարութեան կողմից հաշիւ, որ ընդգրկի մասաւորա-
պէս մի տարւած ժամանակամիջոց: Այս մի տարւած
ընթացքում Խորհրդ. կառավարութիւնը Հայաստա-
նում աշխատել է մի կողմից վերացնել հինը, անպէտ-
քը, միւս կողմից կամաց-կամաց ամրապնդել իր
հիմքերը, անել այն գործը՝ որ դրւած է հայ բանուոր-
ների և գիւղացիների ուսերի վրա:

Խորհրդ. կառավարութիւնը իր յաղթանակից յե-
տո ինչ ստացաւ հին կառավարութիւնից որպէս ժա-
ռանդութիւն: Եթէ մենք ունենայինք փաստաբաններ,
որ պաշտպանէին մեր ժառանգութիւնը, հստորարդ ոչ
թէ նրանք, այլ մենք պիտի ստանայինք (ծափեր):
Հին կառավարութիւնից մենք ստացանք քանդած եր-
կիր, քայքայւած ժողովուրդ. պէտք էր նախ կարգի
ձգել նրան և ապա անցնել շինարար աշխատանքի:
Երբ մենք այս դրինք մեր կէտ նպատակ, մեր աբ-
տաքւած թշնամիները կամ երկրի զանազան ծաղրե-
րում ապաստանած թշնամիները այստեղ ու այնտեղ
հակայեղափոխական բռնկումներ էին տուած բերում,
որպէսզի երկիրը հասցնեն վաթար դրութեան:

Խորհրդ. կառավարութիւնը Հայաստանում պիտի
մոռցնէ տար հին կառավարութեան, դաշնակցու-
թեան հիմունքները թէ արտաքին և թէ ներքին քա-
ղաքական կեանքում: Ինչ էր դաշնակցութեան օրով
հին միջազգային քաղաքականութիւնը. դա բնորոշել

կարող ենք մի խօսքով.—հայի վաղեմի դիւանագիտական քաղաքականութիւն, որը ելակէտ ունէր եւրոպական երկրների այս կամ այն քաղաքական փոխարաբերութիւնը՝ որպէս բուրժուական դասակարգերի շահերից բխած քաղաքականութիւն, այս կամ այն մոմենտին: Դա միջազգային դիպլոմատիայի խաղերից աւ քմահաճոյքից կախած քաղաքականութիւնն էր: Մեր աշխատաւորական քաղաքականութիւնը ուրիշ է: Մենք հիմնուում ենք աշխատաւոր դասակարգերի փոխարաբերութեան վրա: Հայկական նախկին բուրժուական կառավարութիւնները միշտ մտածել են, որ մեր բաղդը կախած է եւրոպական դիպլոմատիայի քմահաճոյքից, որ տնգլիական բուրժուազիան կամ Ֆրանսիան կարող են Հայաստանն ազատագրել, որ Ամերիկան կը վերցնի Հայաստանի մանդատը, եայլն, եայլն: Բայց Հայաստանի այդ իմաստունները, այդ քաղաքագէտները երբէք չեն մտածել այն մասին՝ որ համաժառրկային ուժին իրենք էլ մասնակցեն, հակադրելով այդ ուժը բուրժուական թաթիւն և ազատելով իրենց հայրենիքը, որպէս չարչարող կողմ: Եւ երբ մենք այսօր թերթում ենք պոլսական հայաթերթերը, տեսնում ենք, որ այնտեղ էլի պոռանցում են այդ իմաստունները և Հայաստանի բաղդը կապում են դաբձնալ եւրոպական բուրժուական քաղաքականութեան բաղդի հետ: Հարցեր են դնում, թէ միթէ երկու Հայաստան պիտի լինի: Մարդիկ իրանք չունենալով դեռ մի Հայաստան, խօսում են երկու Հայաստանի մասին (ծափեր):

Ընկերներ, այլ է մեր տեսակէտը. մենք հիմնուում ենք աշխատաւորութեան վրա և նրա տեսակէտով առաջնորդոււմ, այն է, կապ պահպանել աշխատաւոր տարրերի, Խորհրդային երկրների հետ և այդ ուղիով ապահովել մեր երկիրը: Մեր օրինատացիան աշխատաւորական է: Մենք մեր նաւը բռնում ենք Խորհրդային

երկրների կողմը, կապ պահպանելով նաև Եւրոպայի, Արևմուտքի, նրա պրոլետարիատի հետ անխափ: Այս ուղիով մենք կարող ենք հասնել մեր նպատակին: Մենք մեր օժանդակութիւնը կարող ենք տալ բոլոր հայ աշխատաւորներին, եթէ նրանք ցանկանան այս օրինատացիան ընդգրկել: Ներկա Խորհրդային Հայաստանը եղել է միակ երկիրը, որ կարողացել է մի տարւած թացքում խաղաղութիւն հաստատել իր երկրում դաշն կապելով հարեանների հետ և պահպանելով Հայաստանի ժողովրդի Ֆիզիքական գոյութիւնը: Այս տեսակէտն աւսնալով, մենք գնացինք Ղարս, դաշն կապեցինք թիւրքերի հետ, որոնք համարւում էին Հայաստանի դարաւոր թշնամիները: Արտասահմանեան թերթերը դարաւոր թշնամիները: Արտասահմանեան համար այս ջարդնակ գրում էին, որ Հայաստանի համար այս դաշն խաղաղութիւն դաշն էր. բայց հայ աշխատաւորութիւնը լաւ հասկանում է, որ այդ դաշինքը երաշխաւորեց իր խաղաղ կեանքը: Մինչդեռ Դաշնակցութիւնը մտածում էր մի անկախ Հայաստանի մասին, որ տաքածուլու էր ծովից ծով և բռնելու էր ներկայ Ֆրանսիայի երկք քառորդ տարածութիւնը, մենք հրաժարուեցինք այդ յիմարութիւնից, իմանալով, որ այդ ևրադները առաջ կը բերեն միայն ազգակործան կախններ՝ ինչպէս եղել է անցեալում: Ղարսի դաշնագրով, մենք ապացուցեցինք, որ կարող ենք ապրել մեր հարեանների հետ: Մենք կարծում ենք, որ թէ հայ, թէ թիւրք ժողովուրդները—աշխատաւորներ են, որոնք երբէք մեղաւոր չեն փոխադարձ ջնջման գործում, այլ մեղաւոր են եղել նրանց կառավարութիւնները: Ժողովուրդը պիտի կրթել, դաստիարակել և Խորհրդային Հայաստանը գործնականապէս ցոյց տուց այդ՝ հրաւիրելով այդ ժողովուրդներին մասնակցելու երկրի շինարարութեանը (նամակրանք):

Ընկերներ.

Նոյն միջազգային քաղաքականութիւնը մենք

տարանք Անդրկովկասում, Վրաստանի և Ադրբեյջանի հանդէպ: Նախկին կառավարութիւնը նրանց յետ էլ շարունակ կուի մէջ էր: Մեր օրով վերջացան այդ վէճերը և այժմ բոլոր Կովկասեան խորհրդային հանրապետութիւնները ապրում են եղբայրաբար: Նորերս մենք ցանկութիւն յայտնեցինք, որ Կովկասեան հանրապետութիւնները իրար հետ դաշն կապեն՝ ըստեղծելով խորհրդային ֆեդերացիա: Այն ընկերը, որ այստեղ պիտի ղեկուցի այդ մասին, կապացուցի, որ այդ ֆեդերացիան աւելի ևս կամրապնդի աշխատութեան շահերը և Կովկասը, մասնաւոր մեր երկիրը, կարող է անտեսական նեղ դրութիւնից ազատել: Ան այն քաղաքականութիւնը, որ մենք առաջ ենք տանում: Թող մեր թշնամիները խօսեն, որ մենք դաւաճանում ենք ժողովրդին: Այդ ժողովուրդն այսօր տեսնում է, թէ ինչ գործ է կատարում մեր կառավարութիւնը:

Այժմ, ընկերներ, թոյլ տւէք անցնել մեր ներքին քաղաքականութեան:

Մեր ներքին քաղաքականութիւնը մենք տանում ենք մի որոշ գծով, որ կարմիր թիւով անցնում է մեր գործերի միջով: Դա կայանում է նրանում, որ մենք ունենալով զեկը մեր ձեռքին, յենւելով բանւորների և զիւղացիների վրայ հրաւիրում ենք և հնարաւորութիւն ենք տալիս բոլոր կարողութիւնն՝ աշխատանք թափել մեր երկրի վերաշինութեան համար: Այդ բանի մէջ մենք որոշ զիջումներ ենք անում որոշ տարրերին: Մենք ապագայում էլ կտանենք այդ գիծը՝ եթէ համապատասխան ցանկանայ: Իրականութիւնը ցոյց տւեց, որ այդ քաղաքականութիւնը արդարացի է: Այնպիսի երկրում, ինչպէս Հայաստանն է, ուր աշխատաւորական դասակարգերի մեծ մասը կազմում է զիւղացիութիւնը, ուր մեծ մասամբ տնտեսութիւնը մանր է, մենք միայն այս քաղաքականութիւնը կարող էինք տանել: Եթէ այսօր

Խուստտանի քաղաքականութիւնը համարում է նոր, այդ քաղաքականութիւնը Հայաստանի համար ամենասկզբից պէտք է լինէր: Ինձ թւում է, թէ այդ քաղաքականութեան պոչից բռնելով՝ ներկայ կառավարութիւնը կարող է իր գործը վարել: Ազգերի համերաշխութեան տեսակէտից ևս նոյն քաղաքականութիւնը պիտի վարենք ինչպէս ներսում, նոյնպէս դրսում: Այստեղ կան եզրերներ, թուրքեր, և ուրիշ տարրեր, որոնք հարադատ են դո՛ւմ իրանց: Եղբայրական կապ բոլոր ազգութիւնների միջև, որովհետև ազգային խնդիրը միասնական է նրանց: Այսօր, խորհրդային կառավարութեան օրով, ակնհայտ է չէ՞ք այն բանին, որ հէնց առաջին րոպէից վերացել են բոլոր ազգամիջեան գծաութիւնները, որոնք դաշնակների օրով սովորական էին: Բայց մեր թշնամիները միշտ էլ աշխատել են մեր դէմ փոթորիկներ բարձրացնել, այս քաղաքականութեան ընթացքին: Դաշնակները չէին կարող հաշտել այն բանի հետ, որ այս երկրում լինի խորհրդային Իշխանութիւն: Նրանք զէնք վերցրին մեր դէմ անցնալ յունիս-յուլիսին՝ Զանգեզուրում: Սակայն մենք եղանք համբերատար, զնացինք նախ նրանց մօտ, վերացնելու կուի հնարաւորութիւնները, բայց թշնամին եղաւ առաջինը, որ թէ փետրւարին, թէ Զանգեզուրում նախադարձակ եղաւ, նմանւելով առակի այն գայլին, որ միշտ զէպի անտառն է նայում: Մենք պիտի զսպենք այդ գայլին և մենք զսպեցինք՝ Կարմիր Բանակի շնորհիւ (ծափեր):

Արտասահմանում շատ յաճախ, թերթերը գրում են, որ Հայաստանում հալածում են ոչ-կոմունիստ տարրերին, որ բանտարկութիւններ, բռնութիւններ են լինում, և այլն, և այլն: Մենք անշուշտ չենք կարող վերացնել բանտերը, ովքեր դէմ են աշխատաւորների գործին պիտի պատժւեն: Բացարձակ ազատութիւն ոչ մի տեղ չկա, յիմարների համար միայն կա: Բացար-

ձակ ազատութիւնը միայն իրենց հալու աշխատանքով
ապրողների համար էա: Այն մարդիկ որոնք զէմ կեր-
թան մեծամասնութեան շահերին, նրանք կը կրեն ան-
շուշտ իրենց ամենամեծ պատիժը: (Ծափեր): Հայաս-
տանի ներսում թող ժողովուրդը խօսի ու գնահատի
մեր քաղաքականութիւնը: Մենք դանազան կուսակ-
ցութիւններին, խմբակներին տւել ենք ազատութիւն:
Օրինակ, մենք թոյլ տւինք հրատարակել այստեղ
«Մշակ» անկուսակցական թերթը, սակայն նա չկարո-
ղանալով մրցել մեր իդէաների հետ, քոչեց այստե-
ղից Թիֆլիս: Բանի որ դաշնակները կը մնան հիւս սպա-
սաւոր եւրոպական բուրժուազիային, մենք նրանց
չենք կարող տալ ազատութիւն, որովհետեւ նրանք
քար ու քանդական են մեր երկիրը, իսկ այդ բանը չի
ուզում հայ աշխատաւորութիւնը: Աշխատաւորական
դաշնակցականները մեզ դիմում են արեւոր թոյլ տանք
իրանց ազատ գործելու այստեղ: Մենք պատասխանել
ենք նրանց. «Քանի ձեր ձակատին կը կրէք Վաշնակ-
ցական» կործանարար բառը—մենք չենք կարող թոյլ
տալ. դուք եղէք միայն աշխատաւորականներ և այն
ժամանակ տեղ կը գտնէք մեր երկրում (ծափեր):

Ընկերներ.

Մենք այստեղ լուծեցինք նոյնիսկ հոգևորականու-
թեան հարցը, եկեղեցու հարցը: Հոգևորականները եր-
բէք չպիտի ասեն, որ իրենք հալածուած են: Խիղճը և
կրօնը այստեղ ազատ է, միայն թէ հոգևորականները
չպիտի դադարեն քաղաքականութեամբ: Հոգևորական
քաղաքագէտներ մեզ պէտք չեն: Վերջերս, սակայն,
Պօլսա՝այ թերթերում կարդացինք, թէ Հայոց կաթո-
ղիկոսը մի կոնդակով Լուսաւորչի շքանշանն է տւել
Պօղոս Նուբար փառային և Նորատունիեան էֆենդիին,
որ «զցայգ և զցիրեկ տքնէք առ դրունս պետութեանց»,
ինչպէս ասում է կոնդակում: Փաշան և էֆենդին ինք-
նակոչ կերպով Հայաստան են պաշտպանում և ծեծում

են եւրոպական միւնիստրների դռները: Պօղոս Նուբա-
րի արածը մի լաքէյութիւն է, իսկ շքանշան տրւում է
հերոսութեան և գործի համար և ոչ թէ սպասաւորու-
թեան, լաքէյութեան: (ծափեր):

Այստեղ, ահա, մենք կարող ենք ասել մեր սուրբ
հայրերին. «Մի քիչ սպասեցէք, մի քիչ սպասեցէք,
գաւցէ շատ էք շտապում և զրադւեցէք միայն ձեր
կրօնական գործերով»: (Ծափեր):

Մենք մեր վերաբերմունքը ցոյց տւինք նոյնպէս
ինտելիգենցիայի հանդէպ: Մենք հրաւիրեցինք նրան
գործի: Նրա լաւագոյն մասը եկաւ, անկախ իր դաւա-
նանքից: Եթէ նա յանուն աշխատաւորութեան կաշ-
խատի, թող աշխատի: Մենք մեր սահմանները բա-
ցինք իսրաւած դաշնակներին առաջ: Արտասահմանեան
ինտելիգենցիան ևս ազատ կարող է գալ: Խորհրդա-
յին Հայաստանը ներկայացնում են արտասահմանում
որպէս վիշապ՝ որը եկողին կը կլանի, մինչդեռ շատ
եւրոպացի բուրժուաներ գալիս են այստեղ և եւրոպայի
ու Պօլսի պոռնիկ փողոցներից աւելի գնահատում
երևանի փողոցները:

**ՄԵՐ ԳԵՂԱՔԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԱՆՐ ՍԵՓԱԿԱ-
ՆԱՏԵՐՈՐԻ, ԳԻՒՂԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ**

Մեր հոգսերից ամենախոշորը քաղաքի բան-
աւորութիւնը գիւղացիների հետ կապելն է, որով-
հետեւ առանց իրար ուժի՝ չենք կարող մենք տէր
գաւնալ այս երկրին: Խորհրդային կառավարութիւնը
գիւղացու համար ամենալաւ կառավարութիւնն է:
Գիւղացու և բանւորի ընկերակցութիւնը պիտի ամ-
բայնել: Երկիրը պիտի բարձրացնել մանր տնտեսու-
թեամբ, առանց որի անկարելի է մեր ողջ տնտեսու-
թիւնն ապահովել: Եւ մենք առանձին ուշադրութիւն
ենք դարձրել այդ հանգամանքի վրա: Իբրեւ փաստ,

ասեմ ձեռք, որ մեր գիւղատնտեսական կոմիտեի ատեր քաց է թողել 60,000 փ. սերմացու, 100,000 փ. հացահատիկ, որ մեր միջոցներով ձեռք ենք բերել Պարսկաստանից, Բաժանւած է գիւղացիներին զանազան տեսակի 6000 երկրագործական գործիքներ: Անշուշտ սա մի մեծ բան է, սակայն պիտի նկատի ունենալ, թէ ինչ ծանր ու դժուարին պայմաններում ենք ստեղծեց ու ձեռք բերել այս ամենը: Մեր Նարեկմզեմը (Հող-ժողովում) հրատարակել է մի օրէնք, որով գիւղացին կարողանա զարգացնել իր տնտեսութիւնը: Նա օգնութիւն է ցոյց տւել այսպէսէրբերին: Այս երկը տարեկան թաղովի թիւերը թաղւած չէին, իսկ այսօր այդ արւում է: Մի խոշոր հարց էր դրւած մեր առաջ—ամբողջ երկիրը ոտքի հանել այս գարնան՝ հողի աշխատանքի համար: Մեր խղճուկ գանձարանից տւել ենք արդէն որոշ գումար այդ նպատակի համար: Մինք մեր խորին ուշադրութիւնը դարձրել ենք այս կոմիտեի (Հող-ժողովում) վրա:

Սոցիալիստը (Ժողովրդական Տնտեսութեան Գիւրադոյն Սորհուրդ) որ անմիջապէս զբաղւում է քաղաքային տնտեսութեամբ, սահմանափակ դեր է ունեցել: Նա աշխատել է ոտքի կանգնեցնել գործարանները, ինչպէս կոնսեակի, օդու, գինու, կաշիի գործարաններ: Այլանկողին գործարանի վերանորոգումը և աշխատանքը Սոցիալիստի կարեւոր գործերից մէկը պիտի համարել: Թէև աննպաստ պայմանների պատճառով դժուար են առաջ գնում Սոցիալիստի գործերը, բայց յոյս ունենք, որ նա ունի այնքան ուժ որ կը կարողանայ շարունակել և լրացնել իր առաջադրած աշխատանքները:

Պարթոկոմը տարել է խոշոր աշխատանք: Նա ստացել է պարէնը գնման ու փոխանակութեան միջոցով, անց է կացրել պարէնաւորքը մեծ յաջողութեամբ: Հաւաքւած տուրքի 3—4-րդ մասը կգնա ցանքսի

համար: Պարէնաւորքը գիւղացու և բանւորութեան փոխ-յարաբերութեան տնտեսական հիմքն է: Գիւղացու վրա ծանր պարտականութիւններ չենք դրել, նրան առաջարկել ենք միայն օգնել պետութեան, քաղաքին, տալ նրան պարէն, իսկ պետութիւնը իր կողմից խոստանում է ապահովել գիւղացու հանգիստն ու աշխատանքը: Գիւղի և քաղաքի դաշինքը այդպիսով հաստատ է մեղանում: Պարթոկոմն արդէն հաւաքել է հացի 72 տոկոսը, մսի 89 տոկոսը: Սա մի մեծ յաջ-թութիւն է, որ ձեռք է բերւած խաղաղ ու նորմալ միջոցներով:

Չորրորդ խնդիրը կուպերացիան է Հայաստանում որ «Հայկոօպ» կոչումն ունի և որը գոյութիւն ունէր և գաշնակներ ժամանակ, բայց ծառայում էր այլ նպատակների, իսկ այժմ նա աշխատաւորների և գիւղացիների շահերին է ծառայում և իր ձեռք բերած պարէնը բաժանում նրանց մէջ: Նրա դերը այդ տեսակէտից նշանակալից է: Նա կազմակերպւում է նաև արտադրողական, սպառողական և այլ մարմիններ: Խորհրդային Իշխանութեան Հայաստան մտնելուց առաջ այստեղ գոյութիւն չէ ունեցել ոչ մի ընկերակցական հիմնարկութիւն, իսկ այժմ արդէն 115 այդպիսի հիմնարկութիւններ կան, որոնք մինչև այժմ ոսկու հաշւով 105,000 ռ. տւել են գիւղին և ստացել ապրանքներ: Այժմ 12 զանազան արտադրական հիմնարկութիւններ են բացւել, ինչպէս կաշի, սապոնի և այլն, որոնք օգնութեան են հասնում մեր հիմնարկութիւններին: Այս հինգ ամսւա ընթացքում արտասահմանից ահագին քանակութեամբ ապրանք ենք ստացել: Մեր գաղութների մի քանի թերթեր կրկնորդելու են արցունքներ են թափում այն մասին, թէ Հայաստանը ոչ մի տեղից ապրանք չէ ստանում:

Ընկերներ, մինչև այժմ ստացւած է երեանում և Ալեքսիւում 3 միլ. 23,000 փ. ապրանք չհաշւած

Նարաքիլիսան ու Հայաստանի միւս գաւառները: Թող դաշնակցականները հաշիւ տան մեզ այն մասին, թէ որքան ոսկիներ ու թանկարժէք իրեր են տարել Հայաստանից և թէ իրենց տնտեսական քաղաքակա- նութեան օրօք ինչ ապրանք էր ստանում Հայաստա- նը: Խ. Ռուսաստանից մինչև այժմ ստացւած է 3 և կէս միլ. ռուբլի ոսկի, որը շատ մեծ քան է մեր սնանկ զրութեան հետ համեմատած: Բայց այս պատ- կերը լրիւ չէ. ընկեր Նրդնկեանն ու Իւանեանը ձեզ- մանրամասն ցոյց կը տան, թէ տնտեսական ասպարէ- ղում ինչ աշխատանքներ են կատարւած:

Յամենայն դէպս ընկերներ, պիտի ասեմ, որ մի գործ կատարւած է այստեղ, որի մասին շատ պարզ ցոյց են տալիս թւերը: Մենք ունենք այս աշխատանք- ների համար մշակւած մի սխտեմ, որը չնայած հան- ճարիդ չէ, համեստ է, բայց դա մի քայլ է դէպի ա- ռաջ: Մենք ստեղծում ենք մի կանւա, որը ոտքի կը կանգնեցնէ տնտեսապէս քայքայւած Հայաստանը, բայց այս բոլորը միայն այն դէպքում երբ խաղա- ղութիւնը յարատևի մեր երկրում:

Անցնում եմ սոցիալական ապահովութեանը:

Հայաստանը մի երկիր է, ուր սոցիալական ապա- հովութիւնը նոյն դերն է խաղում ինչ գիւղատնտեսու- թիւնը: 50 հազար որը ունենք, որոնք պահոււմ են մեր, ամերիկացիների և այլոց միացեալ ուժերով: Նը- քանց մի մասը դեռ չի տեղաւորւած: 200,000 գաղ- թականութիւն կա Հայաստանում: Մի երկիր, որը մէկ և կէս միլիոն ժողովուրդ ունի, որը, կապւած չէ հողին և արդիւնաբերութեան, նրան պիտի կերակրել և այդ մասին մենք հոգում ենք: Մենք հիւրընկալել ենք ա- մերիկացիներին, որոնք գործուհեա մարդիք են, նրանք իսկապէս որ մի գործ անում են այստեղ, չեն գրադոււմ քաղաքական հարցերով և արժա-ի են մեր քաջալերու- թեան: Միջազգային գաղթականութիւնը ընդունւած և

հիւրընկալւած է մեզ մօտ: Անտանտան նրա վրա ու- շաղորութիւն չէր դարձնում, նրան, բացի մեղանից ոչ ոք չէր կարող օգնել և ճիշտ է, որ աղքատը միայն աղքատին կարող է հասկանալ (բուռն ծափեր):

Մենք գործի ենք կանչել հայ ինտելիգենցիային, թոյլ ենք տւել հիմնել Հայաստանի Օգնութեան Կո- միտէ, որը մեզ օգնութեան է ուղում գալ և որին այդ գործի համար մենք տալիս ենք բոլոր հնարաւորու- թիւնները: Մենք տնտեսական պատւիրականութիւն ուղարկեցիք Արտասահման, դարձեալ հայ աշխատա-ւորութեան շահերի համար: Արտասահմանեան հայ աշխատաւորութիւնը քաջալերում է նրա քայլերը, իսկ բուրժուական թերթերում աւելի շատ մենք խօ-ւք, քան գործ ենք տեսնում:

Դաշնակցութեան ժամանակ բազմաթիւ ֆոնդեր կային Արտասահմանում, որ խժուում էին նրա պա- րագլուխների կողմից:

Այժմ եղածը նոյն գրութեան չենթարկելու պէտք է ունենալ ռեկզիս և խիստ ստուգութիւն:

Թոյլ աւելք ընկերներ, անցնելու մեր գործի մի այլ կողմին, մեր հասարակական կրթութեանը: Հա- յատանը մի երկիր էր ուր արմատացել էր բարքերի անկումը, կաշառակերութիւնը, գողութիւնը, որոնք բուրժուական տիրապետութեան հետեանք էին և պէտք էր եռանդուն աշխատանք թափել հեռացնելու այդ թերութիւնները: Կոմունիստական տարրերը ամենայն թափով այդ աշխատանքները առաջ են տանում:

Լուսժողովում որոշ աշխատանքներ է տանում թէ զեղարւեստի և թէ լուսաւորութեան այլ ճիւղե- րում: Պոլսի «Ժողովրդի Ձայն»-ը ասում է. տնհասկա- նալի են Հայաստանի կառավարութեան շռայլութիւն- ները զեղարւեստի համար, երբ երկիրը քաղցած է: Իբր թէ մենք սնանկ լինելով, լուսաւորութեան գործի վրա միլիարդներ ենք ծախում: Այսպիսով նրանք

մեր հաշիւն մեզ քարոզ են կարգում (ծափեր), բայց պիտի իմանալ, որ մեր աշխատաւորութիւնն ունի իր բաւունք այս մասին խօսել: Լուսաւորութեան գործը թողած միմիայն տնտեսական և այլ խնդիրներով զբաղել չենք կարող: Մեր յաղթութիւնը կրթութիւնից, գիտակցութիւնից և դատարարականից է կախւած: Մենք բաւական մեծ ուշադրութիւն ենք դարձնում օրինակ Կարմիր Բանակի կրթութեան ու ինքնագիտակցութեան վրա, որովհետեւ համոզւած ենք և փորձով գիտենք, որ առանց Կոմունիստական դատարարական բանակը չի կարող յաղթանակներ տանել: Ես այդ խնդիրները վրա երկար չեմ ծանրանում: Այժմ ընկերներ, պէտք է նկատել մի հանգամանք ևս, որ մեր թշնամիները ասում են, թէ Հայաստանում գիցուել գործ է կատարւում, մեզ նոյնիսկ դովաբանում են, բայց արեւ տես որ ասում են նրանք, Հայաստանը կորցրել է իր անկախութիւնը, Բայց ինչ էր ձեր անկախութիւնը, հետաքրքիր է: Դուք կախւած էիք Անտանապոլից, շրջապատւած էիք ամեն կողմից (ծափեր), դուք ներքին շինարարութեամբ չէիք կարող զբաղել, իսկ մենք լողեցինք այդ բոլոր կապերը, վերացրինք այս երկրի գլխին կախւած գամակեան սուրը և տւինք նրան իսկական անկախութիւն: Անկախութիւնը նպատակ չէ աշխատաւորութեան համար, այլ միջոց, իսկ նպատակը—բարեկեցիկ կեանք և լուսաւոր ապագան է, յանուն որի երկիրը կուտմ է: Նրանց քաղաքական նպատակները իբր թէ անկախութիւնն է եղել, այն ինչ երկիրը նրանք սպանդանոց էին դարձրել: Նրանք սկզբունքի և գործի մարդիկ չէին և այդ պատճառով փրփուրի նման գնացին ու չքացան: Յանուն այն բանի, որ բանւորը մուրճ ունենա իր ձեռքին, իսկ գիւղացին հող, մենք կազմակերպել ենք Կ. Բանակը, յաղթա-

հարել ենք բոլոր դժւարութիւնները ու ձեռք բերել իսկական անկախութիւն:

Յօսուում է լեզւի մասին, թէ հայ լեզուն կարաւ տիրապետողը լինելուց, իսկ ես ասում եմ երջանիկ են Հայաստանի բոլոր ազգութիւնները, որ հնարաւորութիւն ունեն իւրաքանչիւրն իր մայրենի լեզուով խօսելու (ծափեր): Ասում են թէ նա ինչ կառավարութիւն է, որի գլխին Ռուսաստանի Կ. Բանակն է կանգնած, բայց ով կուրանա, որ մենք ենք նրան կանչել, որովհետեւ միմիայն մեր սեփական ոյժերով իսկոյն ազատագրւել չէինք կարող: Իսկ ազատւել պէտք էր: Այո, մենք ասում ենք, որ այս երկիրը մերն է և չնայած որ գտնւում է դժնդակ պայմաններում, բայց և այնպէս նա դուրս կը գա այդ դրութիւնից ոչ թէ կարեկցութիւն հայցելով, այլ աշխատաւորութեան հուժկու բազուկներով: Դրութիւնն, այո, ծանր է, բայց նրան պէտք է հանել այդ վիճակից: Դրակիքը ասում էր հին Հռոմում, թէ վայրի դադաններն անդամ գլուխը դնելու տեղ ունեն, իսկ սարուկները—սչ: Մի տարի առաջ նոյն բանը Հայաստանի մասին կարելի էր ասել, որը թ. Իշխանութեան շնորհիւ այժմ վայելում է ազատութիւն և խաղաղութիւն: Մենք սրի ու հրի միջով ձեռք ենք բերել ազատ ապրելու հնարաւորութիւնները: Մեր կէտ նպատակն է այժմ դուրս բերել աշխատաւորութիւնը ծանր վիճակից և տիրացնել իշխանութեանը: Մենք կատարել ենք աշխատաւորութեան մեր վրա դրած պարտականութիւնները, մենք կատարել ենք արդար գործ: Կեցցէ այդ արդար գործը, (երգարաւես բուռն ծափահարութիւններ, որ անցնում են օվսցիսներ):

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ԳԻՆԸ

- № 1—Կարլ Մարքս. Վարձու աշխատանք ու կապիտալ—
Թարգմ. Սա. Շահումյանի 50,000 ռ.
№ 2—Օրինակելի ծրագիր պատմութեան (տպագրւում է)
№ 3— » » արւեստի »
№ 4—Ի. Տապալիս. Հարկաւոր է արդեօք բանւորներին
ու դիւղացիներին սեփական գործ և ինչի՞ համար,
Թարգ. Հ. Նարզիսեանի (տպագրւում է)
✓ № 5—Կոմունիստի առաջին այլբենարանը (տպագրւում է)
№ 6—Դրպանի օրացոյց 1922 թ 10,000 ռ.
№ 7—Ա. Սիւսանիկեան (Սլ. Մարտունի)—Մեր քաղա-
քականութիւնն ու հերթական խնդիրները— 10,000 ռ.
№ 8—Պատի օրացոյց 1922 թ. (տպագրւում է)



ԳԻՆԸ 10,000 Ռ. (Հ. Խ. ԴՐ.)

ՀՀ Ազգային գրադարան



NL0189499

